Այսպիսով, XIII—XIV դդ. սկսած Դիզակի դաշտից, հետզհետե թափանցում է մի նոր էթնիկ տարր և բնակություն է հաստատում Զանգեզուրում, որը նրա առաջին ներխուժման ականատես Կիրակոս Գանձակեցի պատմագիրը բնութագրում է այսպես՝ «էին տեսլեամբ կերպարանաց դժոխատես և ահագնալուր, մօրուս ոչ ունելով, բայց սակաւ ոմանց թուելով մազս ունելով 'ի շուրթն կամ ի' կլափն, ակն նեղ և արագատես, ձայն նուրբ և սուր, բազմակեացք և տեղք»[8]։

1605—1606 թթ. Շահ-Աբասի հրամանով կատարած հայ բնակչության տեղահանությունը դեպի Պարսկաստանի խորքերը, դատարկեց հայերից գլխավորապես Այրարատյան դաշտի և նրան կից սարալանջերի մեծ մասը և գրեթե չշոշափեց Զանգեզուրը և այժմյան Լեռնային Ղարաբաղը։ Այստեղ հայերի թիվը նույնիսկ որոշ չափով ավելացավ, քանի որ, օրինակ՝ Սևանա ավազանից մի քանի իշխանական տներ խույս տալով տեղահան անող պարսկական զորքերից՝ անցան Շահդաղի և Կոնգուրդաղի շղթաների մյուս կողմը, որտեղ հնագույն ժամանակներից առկա էր խիտ հայ բնակչություն և հաստատվեցին Փոքր Կովկասի հյուսիսային լանջերին[9]։ Տեղահանությունից խույս տալու նույնպիսի ձգտումը երևի Նախիջևանի կողմի հայ բնակիչների մի հատվածին հարկադրեց փոխադրվել Քոչբեգի, Բիշենաղի՝ այժմ Սիսիանի և հարևան լեռնանցքներով Զանգեզուրի լեռնաշղթայից արևելք, որով պետք է ավելի ստվարանար Զանգեզուրի արևմտյան շրջանների հայ ազգաբնակությունը, մանավանդ Սիսիան գավառում։ Հայ բնակչության այդ համեմատական խտությունն է առիթ տվել Իսրայել Օրուն դարավերջում, 1699 թվին, հռենոսյան կուրֆյուրստի, պապի ու հռոմեական կայսեր ծրագրի քննության համար մելիքների խորհրդակցությունը հրավիրելու Անգեղակոթում, Սիսիանի խոշոր գյուղում, այդտեղի մելիք Շաֆրազի տանը։ Հայաստանի ազատագրման այդ ծրագրի քննությունից հետո, ինչպես հայտնի է, մելիքների կողմից մի լիազորագիր տրվեց Իսրայել Օրուն, որին ստորագրել են տասը մելիքներ[10]։ Այդ ցուցակը ապացուցում է, թե ինչպիսի խոշոր թվով է ներկայացված եղել հայությունը XVII դ. վերջերում ընդհանրապես ամբողջ գավառում։ Այդ հայաշատ միջավայրումն է, որ ինչպես երկու դար առաջ Տաթևի դպրոցից դուրս եկած հոգևորականների մեջ էր հղացել Սսից և Աղթամարից կրոնական կենտրոնը Վաղարշապատ տեղափոխելու և էջմիածնում ընդհանուր հայոց կաթողիկոսություն վերականգնելու գաղափարը, այնպես էլ XVII դ. վերջերում այստեղ հղացավ նաև քաղաքական ազատագրման գաղափարը, ոչ միայն հղացավ, այլև առաջին փորձը արվեց այդ գաղափարի իրացման համար։ Զինված ազատագրական շարժումը Դավիթ Բեկի առաջնորդությամբ ծայր առավ Զանգեզուրում և սկզբում հաջողություն ունեցավ այն պատճառով, որ այդտեղի հայ բնակչությունը խոշոր զանգված էր կազմում, ֆեոդալական կազմակերպությամբ ներքուստ շաղկապված զանգված, մելիքական տների գլխավորությամբ դարերի ընթացքում իր ռազմական ունակությունն ու հմտությունը իր մեջ ուժեղ պահպանած զանգված։ Եղել են դեպքեր, որ այդ զանգվածի այս կամ այն հատվածը կրո-

---

[8] Կիրակոս Գանձակեցի, գլ. ԼԲ, էջ 160։

[9] Հմմտ. Հովհաննիսյան Աշ., Գեղամայ և Ծարայ մելիքների տոհմը, «Բանբեր», 1921—1922, գլ. ԱԲ, էջ 109։

[10] Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, էջ 20։